

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1569-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

6-Ի N 1569-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 3 հավելվածը լրացնել 68.1 կետով.

«68.1. **Խաղողի տնկարկ** – նույն հողամասում գտնվող խաղողի վազերի շարունակական և ամփոփ առկայություն, որը սահմանազատվում է հարևան տարածքներից՝ հաշվի առնելով արտադրության մասնագիտացումը, այգու տնկման տարեթիվը, ոռոգման տեսակը, սորտային կազմը և այլ բնութագրիչներ, այդ թվում՝ խաղողի գինեմետ և/կամ սեղանի և/կամ համապիտանի սորտերով տնկված այգի: Այս տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հիմնական հատկանիշներով (աղ. 2.1):

**1. Արտաքին նույնականացուցիչ (Id).**

**2. Սկզբի ամսաթիվ (Start\_Date).**

**3. Օգտագործումը (Utilization)** - ներկայացվում է խաղողի կիրառման

նպատակը՝ 1. գինեմետ, 2. սեղանի, 3. համապիտանի.

**4. Տնկման տարեթիվ (Planting\_Year)** - ներկայացվում է տնկարկի տնկման տարեթիվը.

**5. Տնկարկի փաստացի մակերես (Area)**- ներկայացվում է տնկարկի պոլիգոնի փաստացի մակերեսը (չափման միավոր՝ հա).

**6. Սորտ (Variety)** - ներկայացվում է տնկարկում մշակվող սորտը/սորտերը.

**7. Արմատակալ (Rootstock)** - ներկայացվում է ֆիլոքսերադիմացկուն արմատակալով պատվաստված վազերի առկայությունը՝ 0-ոչ, 1-այո.

**8. Ոռոգում (Irrigation)** - ներկայացվում է ոռոգման մասին տեղեկատվություն՝ 1. ոռոգվող, 2. անջրդի.

**9. Ոռոգման տեսակ (Irrigation\_Type)** - ներկայացվում է ոռոգման ձևի մասին տեղեկատվություն՝ 1. ավանդական (առվային եղանակ), 2. խորքային հորերով, 3. կաթիլային.

**10. Փաստացի ստացված բերքի քանակը (Yield)** - ներկայացվում է տնկարկի տվյալ տարվա բերքատվությունը (չափման միավոր՝ g/հա).

**11. Ապահովագրություն (Insurance)** - ներկայացվում է գյուղատնտեսական ապահովագրության առկայությունը՝ 0-ոչ, 1-այո.

**12. Վերջին ամսաթիվ (End\_Year)** - ներկայացվում է տվյալների բազայում խաղողի տնկարկի վերաբերյալ տվյալի հեռացման կամ փոփոխման ամսաթիվը:

Աղյուսակ 2.1 Խաղողի տնկարկ շերտի հատկանիշներ

#### Դաշտի անվանում (Field name)

Արտաքին նույնականացուցիչ (Id)

Սկզբի ամսաթիվ (Start\_Year)

Օգտագործումը (Utilization)

Տնկման տարեթիվ (Planting\_Year)

Տնկարկի փաստացի մակերես (Area)

Սորտ (Variety)

Արմատակալ (Rootstock)

Ոռոգում (Irrigation)

Ոռոգման տեսակ (Irrigation\_Type)

Փաստացի ստացված բերքի քանակը (Yield)

Ապահովագրություն (Insurance)

Վերջին ամսաթիվ (End\_Year)

#### Տվյալի տեսակ (Data)

Integer (10)

Integer (10)

Integer (10)

Integer (10)

Double (10)

VarChar (30)

Integer (10)

Integer (10)

Integer (10)

Double (10)

Integer (10)

Integer (10)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ՝

Նիկոլ Փաշինյան